

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/3

15 հունվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Նուբար Բաղդոյի 15.12.2015թ-ի գանգատը գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ:

Ա/Ձ Նուբար Բաղդոյի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Նուբար Բաղդոյի կողմից 14.10.2015թ. ՀՀ ՖՆ գանգատարկման հանձնաժողով է ներկայացվել դիմում բողոքներ ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության 21 օգոստոսի 2015թ. թիվ 6110661 վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 03.09.2015թ. ընդունված թիվ 397 որոշումը, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 2-րդ բաժնի առաջատար մասնագետների (այսուհետև՝ վարչական մարմին) կողմից 28.09.2015թ. ընդունվել է հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին թիվ 031168 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ըստ որոնց Ա/Ձ Նուբար Բաղդոյի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 708.855 դրամ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը 10 նոյեմբերի 2015թ. ընդունել է թիվ 45/6 որոշումը, ըստ որի ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 21.08.2015թ.-ի թիվ 6110661 ակտի 1-ին կետով և ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 03.09.2015թ. թիվ 397 որոշմամբ առաջադրված, ինչպես նաև գույքի վրա արգելանք դնելու մասին 28.09.2015թ. թիվ 031168 որոշմամբ արգելադրված պարտավորությունները նվազեցնել 60000 դրամի չափով:

25.11.2015թ. Ա/Ձ Նուբար Բաղդոյի կողմից ամբողջությամբ կատարվել են վերը նշված վարչական ակտերով սահմանված հարկային պարտավորությունները, որոնց վերաբերյալ տվյալները երևում են էլեկտրոնային հարկային տեղեկատվական համակարգով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի դրույթների համաձայն՝ «(...)Սույն հոդվածով սահմանված կարգով արգելադրված գույքը արգելանքից հանվում է՝ 2) հարկ վճարողի կողմից հարկային պարտավորության դադարման ...»:

Մեկ այլ դրույթի համաձայն՝ «Պարտավորության մարման նպատակով անհրաժեշտ գումարը համապատասխան գանձապետական հաշիվ մուտքագրվելուց հետո հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարգադրություն ուղարկել համապատասխան անձանց և մարմիններին արգելանքը վերացնելու մասին»:

Վերը նշված դրույթների բովանդակությունից երևում է, որ հարկային պարտավորության վերացման դեպքում արգելադրված գույքը հանվում է արգելանքից, որի վերաբերյալ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ համապատասխան աշխատակիցները պարտավոր էին ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարգադրություն ուղարկել համապատասխան անձանց և մարմիններին արգելանքը վերացնելու մասին: Սակայն մինչև հիմա ՀՏ համապատասխան աշխատակիցների կողմից ոչ մի գործողություն չի կատարվել արգելանքը վերացնելու վերաբերյալ՝ դրսևորելով անգործություն:

Բացի դրանից 14.12.2015թ. ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության կողմից տրվել է թիվ 9427/5 տեղեկանք, ըստ որի Ա/Ձ Նուբար Բաղդոյի մոտ առկա է ՀԴՄ տուգանք գումարի 420.000 չափով պարտավորություն, նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գումար 180.000: Ուղղակի անհասկանալի է, թե ինչպես են այդ գումարները մնացել հարկային տեղեկատվական համակարգում, եթե Ա/Ձ Նուբար Բաղդոյի կողմից ամբողջությամբ կատարվել են վերը նշված վարչական ակտերով սահմանված հարկային պարտավորությունները: Իսկ հարկային մարմնի կողմից դրված արգելադրումը զրկում է Ա/Ձ նուբար Բաղդոյին իրականացնելու իր ընթացիկ ֆինանսական գործառնությունները, աշխատողներին վճարել աշխատավարձ, վճարել ընթացիկ հարկերը, քանի որ արգելադրումն իրականացված է բողոքաբերի ամբողջ գույքի՝ ներառյալ դրամարկղի վրա, առանց հիմնավորման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածի դրույթներով գանգատաբերը խնդրում է ձեռնարկել համապատասխան միջոցներ և պարտավորեցնել ՀՀ ՖՆ Կենտրոնի հարկային տեսչության համապատասխան աշխատակիցներին իրականացնել համապատասխան գործողություններ Ա/Ձ Նուբար Բաղդոյի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա դրված արգելանքը վերացնելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 12.06.2015 թ-ի թիվ 6110661 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Նուբար Բաղդոյի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության և աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 21.08.2015 թ-ի թիվ 6110661 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 720.000 դրամ:

Ակտի 1-ին կետով հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի ա) ենթակետի պահանջները եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 120.000 դրամ:

Ակտի 2-րդ կետով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետով սահմանված տուգանքը՝ գումարով 600.000 դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարը, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի դրույթներով 25.09.2015 թ-ին հրապարակել է թիվ ԱՀ 031168 հանձնարարագիրը հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին: Նշված հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք, ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը և թիվ 397 վարչական վարույթի նյութերը 28.09.2015 թ-ին կայացրել են թիվ 031168 որոշումը՝ հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին, որով արգելանք է դրվել Ա/Ձ Նուբար Բաղդոյին պատկանող գույքի, բանկային հաշիվների և դրամարկղի վրա 708.855 դրամի չափով:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Նուբար Բաղդոյի կողմից սույն գանգատը ՀՀ ֆինանսների նախարարություն մուտքագրվելու հաջորդ օրը՝ 16.12.2015 թ-ին, 28.09.2015

թ-ի թիվ 031168 որոշմամբ Ա/2 Նուբար Բաղդոյին պատկանող գույքի, բանկային հաշիվների և դրամարկղի վրա կիրառված արգելանքը հանվել է: Հետևապես, սույն գանգատով բերված պահանջն արդեն իսկ բավարարված է:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ հասկանալի չէ, թե վերը Ակտով արձանագրված ՀԴՄ տուգանքի գումարը 25.11.2015 թ-ին վճարված լինելու պայմաններում, ինչով է պայմանավորված ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից 14.12.2015թ. տրված թիվ 9427/5 տեղեկանքում նույն ՀԴՄ տուգանքի առկայությունը, ապա հարկ է նշել, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Սույն հոդվածով սահմանված տուգանքը, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում, կրկնապատկվում է»:

Քննարկվող դեպքում տուգանքը կիրառվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 21.08.2015 թ-ի թիվ 6110661 ակտով, որը, սակայն, խախտման փաստն արձանագրելուց հետո (Ակտը կազմելուց հետո) երկամսյա ժամկետում չմուծելու հետևանքով, կրկնապատկվել է:

Ինչ վերաբերվում է Գանգատաբերի ներկայացուցչի կողմից բերված փաստարկին, որ Ակտի դեմ ՀՀ ֆինանսների նախարարություն գանգատ բերված լինելու հանգամանքը պետք է կասեցներ Ակտով կիրառված տուգանքի կրկնապատկումը, ապա հարկ է նշել, որ նշված փաստարկը հիմնավոր չէ, քանի որ ՀՀ օրենսդրությամբ նման դրույթ նախատեսված չէ: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը: Այսինքն, թեև Ակտի դեմ վարչական կարգով գանգատ բերված լինելու հանգամանքը հիմք է հանդիսանում գանգատարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու համար, սակայն դա որևէ կապ չունի տուգանքի գումարը սահմանված ժամկետում չմուծելու հետևանքով այն կրկնապատկվելու հետ, քանի որ անկախ ակտի գործելու կամ կասեցված լինելու հանգամանքից, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանքը խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/2 Նուբար Բաղդոյի 15.12.2015թ-ի գանգատը գույքի վրա դրված արգելանքը վերացնելու վերաբերյալ բավարարել, իսկ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 21.08.2015 թ-ի թիվ 6110661 ակտով կիրառված տուգանքը կրկնապատկվելու դեմ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

